

Հոսմ, 13 հոկտեմբերի
Վճարելի դատարանը մերժեց Տար-
նովայայի և Պրիլուպի դանդաղ
Վենետիկի դատարանի վճար դեմ:
(Հ. Գ.)

Հոսմ, 13 հոկտեմբերի
Փոթորիկը առանձնապես մեծ քանակ
հասցրեց Կապադոկիայում: Իսկիա
կղզու վրա քարուքանդ է եղել Ջրանց-
քը, փչացել են խճուղիները, զոհվել
են 12 մարդ: Եկան Սան-Ջովիոն ա-
կանանալը Իսկիա, «Սարդինիա» զրա-
հանարը՝ Կապադոկիայում, օգնություն
հասցնելու համար: (Հ. Գ.)

Հոսմ, 13 հոկտեմբերի
Մինիստր Սակկին հեռագրեց Սա-
լեթիայի մինիստր-նախագահին, որ
երկրի երկու-երրորդը բոլորովին դա-
տարկվել է, փաստաների տակից
հանել են 34 դեղի, զոհերի թիվը
ընդհանուր առմամբ մոտ 200 է: ա-
ռաջին օգնություն հասցնելը կազմա-
կերպվել է լուսավորչ կերպով: Մի-
նիստը մեկնեց տեսնելու Մայորի,
Մինիստրի, Ամալֆի քաղաքները: Թագա-
ւորը մեկնեց Նեապոլ՝ քննարկելու տե-
ղերի այցելելու նպատակով: (Հ. Գ.)

Բելգիայի, 13 հոկտեմբերի
Դանաթառնից օրը նախփստ անց-
րեց: Նրա ընդհանուր դրուժները գո-
հացուցիչ է: Տարուժներն է 38, դար-
կերները 92, չնչառուժները 28:
Դանաթառնիցը գիշերը լաւ անցրեց,
ընդունում է բաւականին կերակուր:
Տարուժներն 38,1° է: (Հ. Գ.)

Պատգամ, 13 հոկտեմբերի
Կրօնապիտանը կնոջ հետ հոկտ. 20-ին
մեկնում է Արեւելեան Ասիա: (Հ. Գ.)

Լօնդոն, 13 հոկտեմբերի
Միսս Լինսլի արդարացաւ: (Հ. Գ.)

Պորտ-Պրենս, 13 հոկտեմբերի
Պորտ-Պրենսում տեղի ունեցող ուժեղ
պայքովում նախ մէջ-նաւը ջրասույց
եղաւ: Լուրերին նայած, սպանված է
խեղդված են 70, ապառվել են 20
մարդ: Զոհերի թւումն են 10 գնե-
րաներ: (Հ. Գ.)

Հէլսինգֆորս, 13 հոկտեմբերի
Մամուլի գործերի պիստոլ վար-
չուժները գործ սկսեց «Ուսփոխու-
թաւա-Բրադա» և «Իրաւաբեւեռ»
լրագիրների դէմ պետական դատարիւր
յայտնելուն համար: (Հ. Գ.)

Բերլին, 13 հոկտեմբերի
Կառավարութիւնը մերժեց պատժիչ
միջոցներ ձեռք առնել Մաքսիմուս
արտասահմանեան ժուռնալիստների
հետ ընդհարում ունեցած ոտնկալա-
ների դէմ: (Հ. Գ.)

Պե տ ե ռ ռ զ զ. — Վաճառականութիւ-
նը պնդում է աւետարանի օրը դարձնել 15
ժամ, փոխանակ 12-ի: (ԵՃ.)

Մ օ ս լ վ ա. — Հայ գաղութի նիստում յո-
տընկալ յարկից Ս. Մուրադեանի իշա-
տակը: Ընտրվեցին եկեղեցական խորհուրդի
անդամներ Սկրաշեան, Բուհարեան, Սար-
գսեան և Ռուսեան: Աւարակից շնորհա-
ւորական հետադիւր Գր. Չախուրջեանի հա-
տարական գործունէութեան 25-ամեակի
առիթով: (ԵՃ.)

Ծնողների և զաւակների միջև:
Ընտանեկան այս տիպը բաղկացած է ա-
ռաջին զոյգի ժառանգներից, որոնք քոյրեր
և եղբայրներ են, և այնուհետեւ՝ յաջորդ
ժառանգներից, որոնցից իւրաքանչիւր սե-
ռուդը նոյնպէս կապված է քոյր-եղբայրա-
կան կապերով և ամուսնանում էին իւրա-
հետ: Արեւնակցական այսօրինակ ընտանիք
այլ ևս ոչ մի տեղ գոյութիւն չունի: Նա
անայտնացել է ժամանակի ընթացքում սօ-
ցիալական համապատասխան պայմանների
շնորհիւ:

Բայց որ դա անպայման գոյութիւն է
ունեցող շատ հին անցեալում և եղել է ըն-
տանեկան զարգացման առաջին էտապը:
Զբաղ ապացոյց կարող է ծառայել Պօլինե-
զիայում ընդունված ազգայնութեան հաւա-
քական սխառներ, որի մէջ պարզապէս ար-
տայայտված է արեւնակցական ազգայնու-
թեան նախորդ ձևը, որ հնարաւոր է բա-
ցառապէս այս տիպի անցեալի մէջ:

Այստեղ պէտք է միջանկեալ իշխատակնը
Օրդարեան այն բացատրութիւնը, թէ՛ «ըն-
տանիքը ակտիվ գործունեայ տարր է: Նա
անշարժ չէ մնում, այլ զարգանում է, անց-
նելով ստորից բարձր ձևին՝ համապատաս-
խան սօցիալական զարգացման: Մինչդեռ
ազգայնութեան նշանակաւն սխառները՝
զատարի կրաւորական տարր է, երկար ժա-
մանակամիջոց անցնելուց յետոյ միայն նրա
մէջ նկատվում է այն պարզեւոր, որ անդի
էր ունեցել ընտանեկան ձևի մէջ: Մորա-
նի այս խօսքերը Մարքսը լրացնում է հե-
տեւեակով: Միևնույն բանն է տեղի ունե-
նում քաղաքական, իրաւաբանական, կրօ-

Բ Ր Լ Ի Կ Ե Լ. — Ուսանողները ցոյց կազ-
մեցին գերմանական Վիրէլմ կայսրի դա-
ւաւանան դէմ: (ԵՃ.)

ՊԱՐՄԱՍՏԱՆ ԵՒ ԹԻԻՐԻՒՄ

Ուրմիա, 13 հոկտեմբերի
Պարսիկ աւազակները քարուքանդ
արին երկու քրիստոնէական գիւղեր, ո-
րոնք թագնացում էին քրիստոնէական
ներքին: Ազգաբնակչութիւնը փախաւ:
(Հ. Գ.)

Թաւրիզ, 13 հոկտեմբերի
Թաւրիզ-գաղէի կուսակցութիւնը, որ
ձգտում է շահագործական նպատակով
անկարգութիւններ առաջ բերել Թաւրի-
զում, ուժեղանում է: Բաղադրում յուզ-
ված դրուժներն է: Գին-նահանգապետ
մեղադրվում է յետադիմականու-
թեան մէջ: (Հ. Գ.)

Բերլին, 13 հոկտեմբերի
Թիւրքաց փոխառութիւնը Բերլինում
ընթացիկացիին ենթարկելու առիթով
«Բերլ. Տաղէրաթ» ասում է, որ
հիմք չը կայ առանձնապէս ուրախա-
նայ այդ գործողութիւնից, որովհետեւ
Պրիշնը անկասկած գիտել, թէ ինչ էր ա-
նում, երբ հրաժարվում էր փոխառու-
թիւնից: (Հ. Գ.)

Պարիզ, 13 հոկտեմբերի
Հաւասար գործակալութեանը հեռա-
գրում են Աթէնքից: «Տանիսայի վա-
լին պատուիրագրեց Վիլյամսթի պաշ-
տօնեաներին պաշտպանել յունական
ապրանքների բոյկոտը: Այդ ձեռնար-
կութիւնները միանշանակաւ հակասում
են թիւրքաց իշխանութիւնների պաշ-
տօնական յայտարարութիւններին, թէ
բոյկոտը վերջացել է: (Հ. Գ.)

Թ է հ ը ա ն. — Ուրուշի և Ղօչանը զրկել
մթերքներից: (ԵՃ.)

Բ Ե Ր Լ Ի Ն. — Գերմանացի դրամաէրերը
վերստին պահանջում են երկաթուղային
կոնցէսիսիաներ Պարսկաստանում: (ԵՃ.)

Գ. Պ Ե Լ Ի Ն. — Արեւմտեան Պարսկաստանի
թիւրք հիւպատոսները զօրքեր են պահան-
ջում թիւրքական շահերի պաշտպանութեան
համար:

Բ. Կուրը հրաժարվում է ընդունել Պարսի-
զում ժաշկված փոխառութեան պայման-
ները: (ԵՃ.)

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒՐՈՒՆ
ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԻՍՏԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թեմական պատգամաւորական ժողովի
չորրորդ և վերջին նիստը բացվեց հոկտեմ-
բերի 13-ին, երկուշաբթի ժամը 8-ին, ատե-
նապետութեամբ Յովհ. Թումանեանի ներ-
կայ էր պատգամաւորների աւելի ստուար
քանակութիւն:

Օրակարգի առաջին հարցն է նախկին
նիստի ամփոփումը ընթերցումը:
Բարեւոյաւ Ս. Սալայեան կարգում է նախ-
կին նիստի արձանագրութեան համառո-
տումը:

Հետեւեալ խնդիրն է վերաստուգիչ յանձ-
նաժողովի ընտրութեան խնդրը:
Առաջնորդը կարգում է հրահանգի մի յօ-
դումը, որտեղ ասված է, որ այդ մարմի-
նը ընտրվում է չորս տարի ժամանակամի-
ջոցով:

Ասվում է, որ երեքից գաւա, որոնց պաշ-
տօնավարութեան ժամանակամիջոցը դեռ
ևս չէ լրացել, պիտի ընտրել երկու հոգի,

նախ և փիլիսոփայական սխառնների
հետ: Ուրեմն փոփոխութեան է ենթարկ-
վում նախ ներքին բովանդակութիւնը և
ապա արտաքին ձևակերպութիւնը: Եւ հենց
այն միջոցին, երբ ընտանիքը ապրում է
զարգանում է, ազգայնութեան ընդունված
սխառները քարուքանդ, կանգն է առնում եր-
կար ժամանակամիջոց, ընտանեկան կենսա-
քը այդ սխառնից շատ առաջ է անցնում,
առաջադիմում, — հաստատում է Տար. Էսգլը:

Այժմ ուրեմն ընթերցողին է փայտաւել
լը լինի, թէ ինչու մեր վրը յիշած հաւայա-
կան ազգայնութեան այժմ էլ ընդունված
սխառներ տակաւին պահպանում է իր գո-
յութիւնը, մինչդեռ ընտանեկան ներքին
յարաբերութեան ձեւեր այդ սխառնից շատ
առաջ են անցել: Օրինակ՝ հաւայացիք այ-
ժմ էլ իրանց քոյրերին և եղբայրներին զա-
ւակներին համարում են իրանց հարազատ
զաւակները և, հետեւաբար, իրաւաբանական
տեսակետից ժառանգութիւնը պատկանում
է դրանց, սակայն ընտանեկան ամուսնա-
կան ներքին յարաբերութիւնները իրանց
ներկայ կազմով չեն թոյլ տալիս սեռական
որեւէ կապ ունենալ քոյրերի ու եղբայրնե-
րի միջև: Այստեղից պարզ է, որ ազգայնու-
թեան ամուսնական սխառնը վերջնական
է չափազանց դանդաղ կերպով: Այդին հան-
գամանքից էլ արժանաւորւն պէտք է
ըլլի այն եղբայրացեալները, որ հաւայա-
ցիների ընտանիքը ոչ շատ վաղ անցեալում
կրելու է եղել արեւնազգայնական բնառ-
ութիւն:

Սուրբաթեան
(Չը շարունակվի)

որոնց ժամանակամիջոցը լրացել է Ընդուն-
վում է թեմական վերաստուգիչ յանձնա-
ժողովի ամբողջ կազմի ընտրութիւն կա-
տարելը, որը բաղկացած պիտի լինի վեց
հոգուց: Ա. Բաբայանեան և մի խումբ
պատգամաւորներ ներկայացնում են առա-
ձին առանձին բողոքագրեր, որոնք կցվում
են զործին: Հետեւեալ հարցը թեմական
խորհրդի և ուսումնական մարմնի գործու-
նէութեան հաշուառութիւնն է, որ և կար-
գում է քարտուղարը:

Թիֆլիսի թեմական խորհուրդը 1908 — 10
թեմականներին մուտք ունեցել է 651 ր.
25 կ., իսկ ծախք՝ 464 ր. 12 կ., առ 1
հոկտեմբերի ներկայ տարվան: 1909 թ.
փետրվարի 20-ից, մինչև 1910 թ. հոկտեմ-
բերի 8-ը ունեցել է 59 նիստ:

Որոշված 30-ից չը ստանալու պատճառով
խորհուրդը չունենալով միջոցներ, չէ պահել
թեմական տեսուչ, որին որոշված է տալ
4,000 ր. տարեկան: Խորհրդի անդամներ
եղել են՝ Ս. Արուսեան, Ս. Բաղդասար, Ն.
Կանկանեան, Ս. Յարութիւնեան, Ի. Յա-
րութիւնեան, Յ. Տէր-Միքայելեան և Ա. Ղա-
զարեան:

Խորհրդի նախագահն է Գարեգին արքե-
պիսկոպոս:
Թեմական առաջնորդը կարգում է թեմա-
կան խորհրդի գործունէութեան համար
արված տեղակալի հրահանգը:

Ա. Բաբայանեան քննադատում է խոր-
հրդի գործունէութիւնը: Նա ասում է, որ
յոյս դնել ծխական դպրոցներից ստացվե-
լիք տուկոսների վրա՝ ապարդիւն կը լինի:
Պիտի գտնել այլ միջոցներ ծախքերը հոգա-
ւու համար: Սրան միանում է Լ. Ծգաւա-
րեան:

Ա. Ներսիսեան ուղղում է իմաստ, թէ թե-
մական խորհուրդը արեւոք չէ կազմել
կալուածների եկամուտների ցուցակ և առ-
հասարակ այդ ուղղութեամբ թնչ է արել,
կամ թնչ ծրարել:

Գ. Ղազարեան հարց է տալիս, թէ թե-
մական խորհուրդը արեւոք հաւանութիւն
ստեղծ է դպրոցների համար կազմված ծրա-
րէին:

Գ. Խաթաբեան և Յ. Ամբրանեան կար-
ծում են, որ թեմի բոլոր արքեպիսկոպոսները պի-
տի գործադրել թեմական խորհրդի հա-
ւանութեամբ և բոլոր եկամուտները պիտի
անցնեն նրա ձեռքից, գտնվելով նրա վե-
րահսկողութեան տակ: Կցում են, որ ան-
հաճելու է մտնել ժողովրդի մէջ՝ նոր
դպրոցներ բացելու օգտին պրօպագանդ
մղելու համար:

Սիմոն անգամ Մաքսիս վարդապե-
տը հերքում է Յ. Ամբրանեանի ասածները:
Երևանի թեմական խորհրդի մասին, որի
գործունէութիւնը ներկայացվեց շատ վատ
գործերով: Ասում է, որ նոյն թեմական
խորհուրդը նկատողութիւն է տաւցել Վեհ.
Կաթողիկոսից, զմիշտ սահմաններից դուրս
գլուխ համար, հետեւաբար և շատ էլ չը
պէտք է ծանրանալ թեմական խորհրդի ի-
րաւունքների վրա:

Ս. Արուսեան գտնում է, որ պիտի խօսել
ներքին սահմաններում գործող թեմական
խորհրդի մասին, որը իբրեւ թեմական խոր-
հուրդ չէ, այլ ուսումնական մարմին:

Գարեգին Տէր-Յակովբեան գտնում է, որ
ուսումնական կանոնները պիտի ներ-
կայացնեն և նախահաշիւը Բաթանում է Ա.
Ներսիսեանի և Գ. Ղազարեանի արտայայ-
տած մտքերը և մի շարք հարցեր տալիս
ուսումնարանական խորհրդին:

Լ. Տրգաւեան ասում է, որ իրա համար
հետաքրքրական չէ այնպիսի թեմական
խորհրդի անշխար, քանի որ նա դեռ ևս
նոր մարմին է, այլ ինքը հետաքրքրվում է
նրա ապագայով: Գտնում է, որ դեռ ևս չէ
որոշված այդ մարմնի գործունէութեան
ճշգրիտ սահմանները, բայց հաւանական
է համարում, որ ապագայ եռանդուն գործիչ-
ների գործունէութիւնը կը զօր այդ շըր-
ջանակները: Գաւառեայ կերպով հասում է
ամուսն, որ վեհ. Հայրապետն էլ չի զու-
նայ այդ մարմնի գործունէութեան սահմա-
նները ընդլայնել: Զառախօսներից ցանկը
սահմանափակվում է:

Գ. Գարեգինեան քննադատում է խորհրդի
գործունէութիւնը և գտնում է, որ եթէ
հրա անդամները գործունեայ մարդիկ լի-
նէին, առանց իրանց գործունէութեան
սահմաններն իսկ իմանալով՝ գործ կանէին:
Թէև մասամբ նա գտն է նրա գործունէու-
թեանից: Շեշտում է եռանդուն գործիչներ
բացակայութեան վրա:

Պատգամաւորներից մէկը բողոքում է,
որ չորրորդ օրն է արդէն, ինչ ի գուր տեղը
ժողովների մէջ խօսվում է երկարօրէն,
սակայն այդ նրա կարծիքով զուր ժամա-
կանաւորութիւն է, ապա գործըն է գտնում դա-
միճելի: Նրա ետեւից անվում են սուր նկա-
տողութիւններ:

Գ. Խաթաբեան նկատում է, որ վեհական
կալուածների կառավարութեան գործերի
մէջ կամայականութիւն է թագաւորում:
Ասում է, որ պէտք է գնել իրաւասութեան
սահմանները:

Այ. Խաթաբեան գտնում է, որ հրահանգի
կէտերը օրէնքներ չեն, այլ լոկ բարի
ցանկութիւններ բարի մարդու: Պարզում է,
որ հոգեւորականութեան և ժողովրդի միջև
գոյութիւն ունի կրիւ՝ իրաւունքների ընդար-
ձակել չընդարձակելու համար, որը նրա
կարծիքով բնական է: Պիտի պարզել ժողո-
ւրդի իրաւասութեան սահմանները: Ծանկալի
է համարում, որ թեմական խորհրդի ծախ-

քերը ծածկելու համար՝ օժանդակութիւն
տրվի վանքերի եկամուտներից: Ընդգծում
է տիրող անորոշ և խառնաշփոթ դրութեան
մասին: Ծանկանում է, որ դրութիւնը
պարզվի: «Չը պէտք է դարձուրի ճանա-
պարհների դիմելը» — ասում է ճառախօսը:
(Մ. Կաթաւորութիւններ):

Յ. Տէր-Միքայելեան բացատրութիւններ է
տալիս թեմական խորհրդի կողմից և եղած
հարցապնդումներին ու նկատողութիւննե-
րին պատասխանում: Ասում է, որ խոր-
հուրդը վեհական կալուածներից ոչ մի օ-
գուտ չէ ստանում: Շեշտում է, որ թեմական
խորհրդին պատգ. ժողովը դիմելու ժամը
պիտի տայ: Խնդրում է ժողովից դիմում
անել Վեհ. Կաթողիկոսին, որ միջոցների
հետեւաբար ներկայ անորոշ վիճակից դուրս
գալու համար:

Ս. Արուսեան պատասխանում է հարցա-
տուկներին Ասում է, որ այն տուկոսները,
որոնցով պիտի հոգացվեն խորհրդի ծախ-
քերը, չեն կարող ստացվել, որովհետեւ դա-
րոցներ կան, որոնք առանց որեւէ եկամու-
տի աղբիւրներ ունենալու են բացվում:
Պիտի ստեղծել միջոցներ, դպրոցները պա-
հելու համար: Նրա միջոցները գործնական
չեն:

Վիճաբանութիւնները դադարում են:
Կարգապահում են ժողովի ցանկութիւննե-
րը, որոնք ընդունվում են:

Սրանք հետեւեալն են.
«Առաջնորդի թեմական խորհրդին, զեկա-
վարելով 21-րդ յօդուածի Բ. կէտի թեկա-
ւորութեամբ 1) որոշել Վեհապետ Կաթողի-
կոսի հետ բանակցութեան իր իրաւունք-
ները և պարտականութիւնները, 2) յետա-
գայ թեմական ժողովին ներկայացնել զե-
կուցման հետեւանքների մասին, 3) հրաւի-
րել առնուազն 1 թեմական տեսուչ՝ թեմա-
կան ծխ. դպրոցները կարգաւորելու և 4)
թեմական տեսչի ուղեւոր ապահովել թեմա-
կան հասոյթներէն:

Որոշվում է ընտրել թեմական խորհրդի
12 անդամներ և 4 փոխանակներ, ներկի-
սեան դպրոցի 6 հոգաբարձու և 4 անձ-
նափոխանորդ և վերաստուգիչ յանձնա-
ժողովի 6 անդամներ:

Առաջնորդում են թեմականները թեմա-
կան խորհրդի համար:

Պատգամաւորներից մի քանիսը, նրանց
թիւում Ստ. Մալխասեան, Յ. Բ. Ժողովա-
րեան, Գր. Ե. Շերաքաւեան, հրաժար-
վում են ընտրելու իրենց և ձեռնպահ են մը-
նում այդ ընտրութեանը մասնակցելու գոր-
ծում:

Թեմական խորհրդի անդամութեան համար
արվում են հետեւեալ անձանց անունները.
— Այ. Կաթաւոր, Ի. Յարութիւնեան, Բժշկ.
Բ. Նաւասարդեան, Յ. Սպենդիարեան,
Ստ. Մալխասեան, Յ. Տէր-Միքա-
յելեան, Կ. Կանկանեան, Ա. Արեւիկեան, Լ.
Աղայեան, Լ. Լուսին, Յ. Փիլաթեան, Գ.
Վարդանեան, Ս. Բ. Շիրոյեան, Գ. Ղազա-
րեան, Յ. Արեւիկեան, Ս. Արուսեան, Ն.
Արեւիկեան, Ա. Թադեոսեան, Ա. Բիշմի-
շեան, Ա. Բաբայանեան և այլք:

Թեմ. խորհրդի անդամներ են ընտրվե-
լում և ընտրվում հետեւեալ անձինքը. — Ս.
Աթաբեկեան՝ 61 ձայնով, Ա. Թադեոսեան՝
61 ձ., Լ. Աղայեան՝ 61 ձ., Յ. Տէր-Միքա-
յելեան՝ 48 ձ., Ե. Փիլաթեան՝ 59 ձ., Ի. Յա-
րութիւնեան՝ 56 ձ., Լ. Կանկանեան՝ 47 ձ.,
Ա. Արեւիկեան՝ 42 ձ., Յ. Արուսեան՝ 50 ձ.,
Ս. Արուսեան՝ 58 ձ., Գր. Վարդանեան՝ 48
ձ., Գ. Սաթիսեան 51 ձ.:

Անձնափոխանորդութեան համար արվում
են՝ Գ. Կարգաւոր, Տ. Գիւլայեան, Ս.
Կարգաւոր, Յ. Արեւիկեան, Ս. Տէր-
Միքայելեանի անունները, որոնցից ընտ

